մին նորա ողջ անարատ, և անապական ըստ ամենայն մասանց որպէս նորոգ թաղեալ։ Եւ խօնախ աղաչայ խաչատրին պատմեաց թէ ի գալ ամի բանալոց են զտապանն, և հանդիսիւ մեծաւ դնելոց են յեկեղեցւոջ. և գոյ կարծիք սրբացուցանելոյ։ Այլ զի այս քաղաք թրեսթու ապշեցոյց զմեզ. վասն այն պատշաճ վարկաք մանաւանդ աղաչանօք յիշեցուցանել Դեր. հօրդ մերոյ զայս ինչ։ Լսէաք այդրէն գովութիւնս զթրեսթէն, այլ այժմ աչօք տեսեալ, և գրեթէ ընդ ամենայն կողմն շրջեալ՝ ասեմք միաբերան, թէ և ոչ ի կէսն է զոր լսէաք, զի այնչափ ընդարձակեալ և մեծացեալ է, և գեղեցկացեալ շինուածովք, տամբք, ապարանօք և եկեղեցեօք, զորս շինեալ են, և օր ըստ օրէ շինեն և շինելոց են ցամաքեցուցանելով զծով, և հատանելով զլերինս, զորս և անձամբ գնացեալ տեսաք, մինչ զի և բնակիչքն զարմանան, և ասեն թէ այս ոչ է թրեսթ, այլ այլ քաղաք. և յետ ոչ բազում ամաց լինելոց է երկրորդ վենէտիկ։ Ի շինուածս յայսոսիկ հազիւ նշմարի քանի մի կղմինտր. վերուստ ի վայր առ հասարակ քարամբք շինեն զորս ի լերանց հատանեն, մինչև զախոռս ևս. և բովանդակքն ալա մօտա և ալա ճերմանիա։ Եւ այնչափ վայելուչ և ընդարձակ փողոցս և հրապարակս արարեալ են, մինչ զի ոչ յագին տեսանողք։ Թողումք ասել զանպատմելի վայելչութիւն պարտիզաց և այգեստանաց և զլերանց, զորս որչափ և տեսցէ ոք՝ ոչ շատանայ. այլ և օդն պատուական և ջուրքն զորս արուեստիւ ի լերանց ի քաղաքն բերեալ շատրվանօք բղխեցուցանեն, ազնիւ յոյժ։ Եւ այնպէս վաճառուց տեղի է՝ զի և աղաչայ խաչատուրն ասաց՝ թէ ընդ ամենայն կողմն հանապազ երթան ապրանք ի թրեսթէ։ Ի կողմանէ բարեաց՝ բարելից է յոյժ, զի անդադար գայ եթէ ընդ ծով, և եթէ ընդ ցամաք. և յամենայն օր լինի պազար, ոչինչ պակաս գրեթէ քան զշաբաթ աւուր պազարս այլոց քաղաքաց։ Բազմամարդ է յոյժ. և պէչն բաղդատեալ թրեսթու ոչ երևեցաւ մեզ ինչ։ Վերջապէս ըստ ամենայնի գբօսալի է. և յետ ոչ ասեմք բազում այլ զկնի երից և չորից ամաց լինի իբրև զմի ի մայր քաղաքաց։ Զայս ամենայն գրեցաք ոչ դիզաբանութեամբ, այլ ճշմարտութեամբ. և խօսելով ընդ միմեանս ասացաք և ասեմք, զի եթէ յառաջ քան թէ յայլ ուրեք փութով որչափ հնար է ձեռն արկցէ Հասարակութիւնն, հաճութեամբ ձերով տեղի մի ստանալ աստէն ընդ որ կոյս և հաճի, զոր և ձրի տան որպէս և աղաչայ խաչատուրն ասաց, ոչ զղջանայ հասարակութիւնն, և եթէ ոչ կարծեմք թէ մեծ զղջումն լինի յետոյ, և ոչ կարեմք գտանել. մանաւանդ զի ձրի տալն ևս ոչ տևէ ընդ երկար որպէս երևի. զի զկնի չորից և հնգից ամաց՝ ծածկի այս երկիր շինուածովք։ Ուստի յոյժ յարմար երևեցաւ մեզ այս տեղի, գոնէ ստանալ և նշանել զտեղի առ այժմ. և եթէ կամի տէրութիւն ձեր՝ կարէ ցամաքաւ զաւուրս երկուս գալ ի թրեսթ միանգամ տեսանել, կամ զորս և կամի՝ առաքել զի տեսցեն. յուսամք թէ սուտ ոչ ելանեմք։ Զայս համարձակեցաք գրել բարի թուելով մեզ ծանուցանել որ օգտակար երևեցաւ միաբանութեան։... Խօնախ աղաչայ խաչատրին պատմեաց՝ թէ ի քակել ուրեք զորմունս ինչ՝ գտեալ եղև ի տապանի միում գրեալ ի վերայ մագաղաթի եբրայեցէրէն դատավճիռն պիղատոսի որով դատապարտեաց ի մահ զփրկիչն. զօրինակ նորա խաչերէն թարգմանեալ ըստ ամենայնի եբեր և ընթերցաւ առաջի մեր. իսկ ես աղաչեցի զի տացէ ինձ օրինակել և առաքել զօրինակն այդրէն. և նա ասաց թէ յօժար սրտիւ տամ. յետոյ ասաց թէ վարպետի միում տաց զի լաւ գրով օրինակեսցէ, և զայն առաքեսցես։ Ահա առաքեմ զայն, և ի նմա գրեալ կայ նաև եղանակ գիւտի նորա։...

Նուաստ ծառայք

ի մայիսի 19 [Թրիեսթ] — Հ. Փիլ[իպոս], Հ. Վարդ[ան Ագոնց] և Հ. Բարս[եղ] անարժան վարդապետք

ՄԿ.

Ամառնային շրջանի մէջ ի Պոլիս պատահած հսկայ և զարհուրելի երկրաշարժի մը անբացատրելի աղէտներն ու սարսափը մանրամասնօրէն կը պատմուին մեր Վարդապետներէն՝ հետևեալ չորս նամակներուն մէջ։